

Մտավոր Սեփականության Համաշխարհային Կազմակերպության
Հեղինակային Իրավունքի
Պայմանագիր

(Ժնև1996)

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Պայմանավորվող կողմերը

Ցանկանալով հնարվորին չափ արդյունավետ և միասնական զարգացնել և պահպանել գրական և գեղարվեստական ստեղծագործությունների նկատմամբ հեղինակների իրավունքների պաշտպանությունը,

Ճանաչելով նոր միջազգային կանոններ ընդունելու և նոր տնտեսական, սոցիալական, մշակութային և տեխնոլոգիական զարգացումներից բխող հարցերի պատշաճ լուծման նպատակով՝ գոյություն ունեցող որոշ կանոնների մեկնաբանության հստակեցման անհրաժեշտությունը,

Ճանաչելով տեղեկատվության և կապի տեխնոլոգիաների զարգացման և համապատասխանեցման մեծ ազդեցությունը գրական և գեղարվեստական ստեղծագործությունների ստեղծման և օգտագործման վրա ,

Շեշտելով հեղինակային իրավունքների պաշտպանության կարևորությունը՝ որպես գրական և գեղարվեստական ստեղծագործության խթանիչ գործոն,

Ընդունելով հեղինակների իրավունքների և հասարակության շահերի միջև հավասարակշռության պահպանման անհրաժեշտությունը, հատկապես կրթության, հետազոտությունների և տեղեկատվության հասանելիության բնագավառներում, ինչպես արտացոլված է Բեռնի կոնվենցիայում,

Համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1.

Առնչությունը Բեռնի կոնվենցիայի հետ

(1) Սույն Պայմանագիրը հատուկ համաձայնագիր է Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին Բեռնի կոնվենցիայի 20-րդ հոդվածի իմաստով, որը վերաբերում է այն Պայմանավորվող կողմերին, որոնք այդ Կոնվենցիայով հիմնադրված Միության երկրներ են:

Սույն Պայմանագիրը որևէ կապ չունի այլ պայմանագրերի հետ, բացի Բեռնի կոնվենցիայից և չի վնասում այլ պայմանագրերով նախատեսված որևէ իրավունքներ եւ պարտավորություններ:

(2) Սույն պայմանագիրը որևէ կերպ չի վնասում գոյություն ունեցող այն պարտավորություններին, որոնք Պայմանավորվող կողմերն ունեն միմյանց նկատմամբ՝ գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին Բեռնի կոնվենցիայով:

(3) Այսուհետ «Բեռնի կոնվենցիա» նշանակում է գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին Բեռնի կոնվենցիայի 1971թ. հուլիսի 24-ի Փարիզյան ակտը:

(4) Պայմանավորվող կողմերը կիրառում են Բեռնի կոնվենցիայի 1- 21 հոդվածները և նույն Կոնվենցիայի հավելվածը:

Հոդված 2

Հեղինակային իրավունքների պաշտպանության շրջանակը

Հեղինակային իրավունքների պաշտպանությունը տարածվում է արտահայտությունների ձևերի և ոչ թե գաղափարների, գործընթացների, աշխատանքի մեթոդների կամ մաթեմատիկական հասկացությունների վրա, որպես այդպիսիք:

Հոդված 3

Բեռնի կոնվենցիայի 2-6 հոդվածների կիրառումը

Պայմանավորվող կողմերը, հաշվի առնելով համապատասխան փոփոխությունները, սույն Պայմանագրով նախատեսված պահպանության նկատմամբ կիրառում են Բեռնի կոնվենցիայի 2-6 հոդվածների դրույթները:

Հոդված 4

Համակարգչային ծրագրեր

Համակարգչային ծրագրերը պահպանվում են որպես գրական ստեղծագործություններ՝ Բեռնի կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով: Այդպիսի պահպանությունը կիրառվում է համակարգչային ծրագրերի նկատմամբ, անկախ դրանց արտահայտման եղանակի կամ ձևի:

Հոդված 5

Տվյալների բանաքաղում (Տվյալների բազա)

Տվյալների կամ այլ նյութերի ցանկացած ձևով բանաքաղումը, որոնք իրենց բովանդակության ընտրությամբ կամ տեղաբաշխմամբ ստեղծագործական աշխատանք են, պահպանվում են որպես այդպիսիք: Այդ պահպանությունը չի տարածվում բուն տվյալի կամ նյութի վրա և չի վնասում հավաքված տվյալներում կամ նյութերում առկա որևէ հեղինակային իրավունքի:

Հոդված 6

Տարածելու իրավունք

(1) Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների հեղինակներն օգտվում են բացառիկ իրավունքից՝ թույլատրելու իրենց ստեղծագործությունների բնօրինակը եւ կրկնօրինակները հանրությանը մատչելի դարձնելը, վաճառքի կամ սեփականության իրավունքի փոխանցման այլ միջոցով:

(2) Ոչինչ սույն Պայմանագրում չի ազդում Պայմանավորվող կողմերի անկախության վրա՝ սահմանելու այն պայմանները, եթե այդպիսիք կան, որոնց համաձայն (1) ենթակետում նշված իրավունքի դադարեցումը կիրառվում է ստեղծագործության առաջին վաճառքից կամ հեղինակի թույլտվությամբ ստեղծագործության բնօրինակի կամ կրկնօրինակի սեփականության իրավունքի փոխանցումից հետո:

Հոդված 7

Վարձույթով տալու իրավունք

(1) Հեղինակները՝

(i) Համակարգչային ծրագրերի,
(ii) կինեմատոգրաֆիկ ստեղծագործությունների, և
(iii) ստեղծագործությունների՝ հնչյունագրերում ամրագրված, ինչպես սահմանված է Պայմանավորվող կողմերի ազգային օրենքով, օգտվում են բացառիկ իրավունքից՝ թույլատրելու իրենց ստեղծագործությունների բնօրինակները կամ կրկնօրինակները հանրությանը առևտրային նպատակով վարձույթով տալը:

(2) 1-ին կետը չի կիրառվում՝

(i) համակարգչային ծրագրերի դեպքում, երբ ծրագիրն ինքնին վարձույթով տալու հիմնական առարկան չէ, և

(ii) կինեմատոգրաֆիկ ստեղծագործությունների դեպքում, եթե այդպիսի ստեղծագործությունների առևտրային նպատակով վարձույթով տալը չի հանգեցրել լայնածավալ վերարտադրման, որը էական վնաս է հասցնում վերարտադրության բացառիկ իրավունքին:

(3) Չնայած 1-ին կետի դրույթներին, Պայմանավորվող Կողմը, որը 1994թ. ապրիլի 15-ի դրությամբ ունի և շարունակում է ունենալ հնչյունագրերում ամրագրված ստեղծագործությունների կրկնօրինակները վարձույթով տալու համար հեղինակների արդարացի վարձատրության համակարգ, կարող է պահպանել այդ համակարգը պայմանով, որ հնչյունագրերում ամրագրված ստեղծագործությունների առևտրային վարձույթը նյութական վնաս չի պատճառում հեղինակների՝ վերարտադրության բացառիկ իրավունքին:

Հոդված 8

Հրապարակային հաղորդման իրավունք

Առանց վնասելու Բեռնի կոնվենցիայի 11 (1) (ii), 11bis(1)(i) եւ (ii), 11ter (1) (ii), 14 (1) (ii) և 14bis (1) հոդվածների դրույթները, գրական և գեղարվեստական ստեղծագործությունների հեղինակները օգտվում են բացառիկ իրավունքից թույլատրելու իրենց ստեղծագործությունները հրապարակայնորեն հաղորդելու հաղորդալարով կամ առանց հաղորդալարի, ներառյալ հանրությանը մատչելի դարձնելը, այնպիսի եղանակով, որ հասարակության անդամներին դրանք հասանելի լինեն անհատապես ընտրած ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ:

Հոդված 9

Լուսանկարչական ստեղծագործությունների պահպանության ժամկետը

Լուսանկարչական ստեղծագործությունների առումով Պայմանավորվող կողմերը չեն կիրառում Բեռնի կոնվենցիայի Հոդված 7 (4) –ի դրույթները:

Հոդված 10

Սահմանափակումներ և բացառություններ

(1) Պայմանավորվող կողմերը կարող են, իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսել սույն Պայմանագրի հիման վրա գրական և գեղարվեստական ստեղծագործությունների հեղինակներին տրամադրվող իրավունքների սահմանափակումներ կամ բացառություններ որոշ հատուկ դեպքերում, որոնք չեն խոչընդոտում ստեղծագործության բնականոն օգտագործմանը և անհիմն կերպով չեն վնասում հեղինակի օրինական շահերը:

(2) Պայմանավորվող կողմերը, Բեռնի կոնվենցիան կիրառելիս, դրանով նախատեսված իրավունքների ցանկացած սահմանափակում կամ բացառություն սահմանափակում են որոշ հատուկ դեպքերով, որոնք չեն խոչընդոտում ստեղծագործության բնականոն օգտագործմանը և անհիմն կերպով չեն վնասում հեղինակի օրինական շահերը:

Հոդված 11
Տեխնոլոգիական միջոցառումներին վերաբերող
պարտավորություններ

Պայմանավորվող կողմերն ապահովում են պատշաճ իրավական պահպանություն և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ ընդդեմ այն արդյունավետ տեխնոլոգիական միջոցների շրջանցումների, որոնք հեղինակներն օգտագործում են սույն Պայմանագրով կամ Բեռնի կոնվենցիայով իրենց իրավունքների իրականացման կապակցությամբ, և որոնք սահմանափակում են գործողություններն իրենց ստեղծագործությունների նկատմամբ ու թույլատրված չեն հեղինակների կողմից կամ արգելված են օրենքով:

Հոդված 12

Իրավունքների կառավարման մասին տեղեկատվությանը վերաբերվող պարտավորությունները

(1) Պայմանավորվող կողմերը ապահովում են պատշաճ իրավական պահպանություն և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ ընդդեմ ցանկացած անձի, ով գիտակցաբար կատարում է հետևյալ գործողություններից որևէ մեկը, իմանալով, կամ քաղաքացիական իրավական պահպանության միջոցների առումով բավականաչափ հիմքեր ունենալով իմանալու, որ այդպիսի գործողությունը կխթանի, կնպաստի, կօգնի, կամ կքողարկի սույն Պայմանագրով կամ Բեռնի կոնվենցիայով սահմանված որևէ իրավունքի խախտում:

(i) առանց թույլտվության հեռացնել կամ փոփոխել իրավունքների կառավարման վերաբերյալ որևէ էլեկտրոնային տեղեկատվություն:

(ii) առանց թույլտվության տարածել, տարածման նպատակով ներմուծել, եթերով հեռարձակել կամ հրապարակայնորեն հաղորդել ստեղծագործությունները կամ դրանց կրկնօրինակները, իմանալով, որ իրավունքների կառավարման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվությունը հեռացվել կամ փոփոխվել է առանց թույլտվության:

(2) Սույն Հոդվածի իմաստով «իրավունքների կառավարման մասին տեղեկատվությունը» նշանակում է տեղեկատվություն, որը նույնականացնում է ստեղծագործությունը, ստեղծագործության հեղինակին, ստեղծագործության նկատմամբ որևէ իրավունքի իրավատիրոջ, կամ ստեղծագործության օգտագործման ժամկետների և պայմանների վերաբերյալ տեղեկատվություն, և ցանկացած համար կամ կոդ, որոնցում պարունակվում է այդպիսի տեղեկատվություն երբ այդ տեղեկատվության տարրերից ցանկացածը կցված է ստեղծագործության կրկնօրինակին, կամ ի հայտ է եկել ստեղծագործությունը հրապարակայնորեն հաղորդելու կապակցությամբ:

Հոդված 13

Կիրառումը ժամանակի առումով

Պայմանավորվող կողմերը կիրառում են Բեռնի կոնվենցիայի 18-րդ Հոդվածի դրույթները սույն Պայմանագրով նախատեսված պահպանության բոլոր ձևերի նկատմամբ:

Հոդված 14

Իրավունքների իրականացման վերաբերյալ դրույթներ

(1) Պայմանավորվող կողմերը պարտավորվում են, համաձայն իրենց օրենսդրության, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու սույն Պայմանագրի կիրառումը:

(2) Պայմանավորվող կողմերը երաշխավորում են, որ իրենց օրենքով կնախատեսվեն այնպիսի միջոցառումներ, որոնք թույլ կտան կատարել արդյունավետ գործողություններ՝ սույն

Պայմանագրով տրամադրվող իրավունքների որևէ խախտման դեմ, ներառյալ խախտումները կանխելու անհապաղ միջոցներ, և միջոցներ, որոնք կբացառեն հետագա խախտումները:

Հոդված 15 Ասամբլեա

(1) (ա) Պայմանավորվող կողմերն ունեն Ասամբլեա:

(բ) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ներկայացվում է մեկ պատվիրակով, որը կարող է ունենալ տեղակալներ, խորհրդատուներ և փորձագետներ:

(գ) Յուրաքանչյուր պատվիրակության ծախսերը հոգում է այն նշանակող Պայմանավորվող կողմը: Ասամբլեան կարող է դիմել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությանը (այսուհետ՝ ՄՍՀԿ)՝ ֆինանսական աջակցության խնդրանքով, օժանդակելու այն Պայմանավորվող կողմերի պատվիրակների մասնակցությանը, որոնք ՄԱԿ-ի Ասամբլեայի պրակտիկայի համաձայն համարվում են զարգացող երկրներ, կամ որոնք գտնվում են շուկայական տնտեսության անցումային փուլում:

(2) (ա) Ասամբլեան քննարկում է այն հարցերը, որոնք առնչվում են սույն Պայմանագրի պահպանմանը, զարգացմանը, կիրառմանն ու գործողությանը:

(բ) Ասամբլեան կատարում է 17-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ որոշ միջկառավարական կազմակերպություններին սույն Պայմանագրին միանալը թույլատրելու իր գործառույթը:

(գ) Ասամբլեան որոշում է սույն Պայմանագրի վերանայման նպատակով գումարել դիվանագիտական համաժողով և անհրաժեշտ հանձնարարականներ է տալիս ՄՍՀԿ-ի Գլխավոր տնօրենին՝ նման դիվանագիտական համաժողով նախապատրաստելու համար:

(3) (ա) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որը Պետություն է ներկայացնում, ունի մեկ ձայն և քվեարկում է միայն իր անունից:

(բ) Ցանկացած Պայմանավորվող Կողմ, որը հանդես է գալիս որպես միջկառավարական կազմակերպություն իր անդամ պետությունների փոխարեն կարող է մասնակցել քվեարկությանը՝ ձայների այն քանակությամբ, որը հավասար է անդամ պետությունների ձայների քանակին, որոնք սույն Պայմանագրի կողմերն են: Ոչ մի նման միջկառավարական կազմակերպություն չի կարող մասնակցել քվեարկությանը, եթե իր անդամ պետություններից մեկն օգտվում է քվեարկության իր իրավունքից և ընդհակառակը:

(4) Ասամբլեան հերթական նիստի է հավաքվում յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամ՝ ՄՍՀԿ-ի Գլխավոր Տնօրենի գումարմամբ:

(5) Ասամբլեան ընդունում է ընթացակարգի իր կանոնները ինչպես նաև արտահերթ նիստերի գումարումը, քվորումի պահանջները և, ելնելով Պայմանագրի դրույթներից, տարբեր տեսակի որոշումների ընդունման համար ապահովում է պահանջվող մեծամասնությունը:

Հոդված 16 Միջազգային բյուրո

ՄՍՀԿ-ի միջազգային բյուրոն իրականացնում է Պայմանագրին առնչվող վարչական գործառույթները:

Հոդված 17
Պայմանագրի կողմ դառնալու իրավունք

- (1) ՄՍՀԿ-ի յուրաքանչյուր Անդամ Պետություն կարող է դառնալ սույն Պայմանագրի կողմ:
- (2) Ասամբլեան կարող է որոշել թույլատրել որեւէ միջկառավարական կազմակերպության դառնալու սույն Պայմանագրի կողմ, որը հայտարարում է, որ իրավասու է սույն Պայմանագրով կարգավորվող հարցերի կապակցությամբ եւ ունի իր բոլոր անդամ պետությունների համար պարտադիր իրավական կանոններ, և որ այն ներքին ընթացակարգերին համապատասխան պատշաճ կարգով լիազորվել է դառնալու սույն Պայմանագրի կողմ:
- (3) Եվրոպական համայնքը, սույն Պայմանագիրն ընդունած Դիվանագիտական Համաժողովում հայտարարություն անելով վերը նշված կետի վերաբերյալ, կարող է դառնալ սույն Պայմանագրի կողմ:

Հոդված 18
Պայմանագրով տրամադրվող իրավունքներն ու պարտավորությունները

Եթե սույն Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է օգտվի բոլոր իրավունքներից և ստանձնի սույն Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները:

Հոդված 19
Պայմանագրի ստորագրումը

Սույն Պայմանագիրը բաց է ՄՍՀԿ-ի ցանկացած Անդամ Պետության և Եվրոպական համայնքի կողմից ստորագրման համար՝ մինչև 1997թ դեկտեմբերի 31-ը:

Հոդված 20
Պայմանագիրն ուժի մեջ մտնելը

Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 30 Պետությունների կողմից վավերացման կամ միանալու մասին փաստաթուղթը ՄՍՀԿ-ի Գլխավոր տնօրենին ի պահ հանձնելուց երեք ամիս հետո:

Հոդված 21
Պայմանագրի Կողմ դառնալու իրավունք

Սույն Պայմանագիրը պարտադիր է .

- (i) 29-րդ հոդվածում հիշատակված 30 Պետությունների համար՝ սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից:
- (ii) Յուրաքանչյուր այլ պետության համար՝ ՄՍՀԿ-ի Գլխավոր տնօրենին իր վավերագիրն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո:
- (iii) Եվրոպական համայնքի համար՝ վավերացման կամ միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս հետո, եթե 20-րդ հոդվածի համաձայն նման փաստաթուղթն ի պահ է հանձնվել սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո, կամ սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց երեք ամիս հետո, եթե նման փաստաթուղթն ի պահ է հանձնվել սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց առաջ:

- (iv) Ցանկացած այլ միջկառավարական կազմակերպության համար, որին թույլատրվել է դառնալ սույն Պայմանագրի կողմ՝ միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:

Հոդված 22

Վերապահության անթույլատրելիությունը Պայմանագրում

Սույն Պայմանագրի նկատմամբ որևէ վերապահում չի թույլատրվում:

Հոդված 23

Պայմանագրի չեղյալ հայտարարումը

Ցանկացած Պայմանավորվող Կողմ կարող է չեղյալ հայտարարել սույն Պայմանագիրը ՄՄՀԿ-ի Գլխավոր տնօրենին ուղղված ծանուցմամբ: Ցանկացած չեղյալ հայտարարում ուժի մեջ է մտնում ՄՄՀԿ-ի Գլխավոր Տնօրենի կողմից ծանուցումն ստանալու օրվանից 1 տարի անց:

Հոդված 24

Պայմանագրի լեզուները

- (1) Սույն Պայմանագիրն ստորագրվում է մեկ բնօրինակով՝ անգլերեն, արաբերեն, չինարեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:
- (2) Պաշտոնական տեքստն այլ լեզուներով, բացի 1 կետում նշված լեզուներից, հաստատվում է ՄՄՀԿ-ի Գլխավոր տնօրենի կողմից շահագրգիռ կողմի խնդրանքով՝ բոլոր շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելուց հետո: Սույն կետի նպատակով «շահագրգիռ կողմ» նշանակում է ՄՄՀԿ-ի ցանկացած անդամ պետություն, որի պաշտոնական լեզուն, կամ լեզուներից մեկը ներգրավված է, ինչպես նաև Եվրոպական համայնքը և ցանկացած այլ միջկառավարական կազմակերպություն, որը կարող է սույն Պայմանագրի կողմ դառնալ, եթե դրա պաշտոնական լեզուներից մեկը ներգրավված է:

Հոդված 25

Ավանդապահը

ՄՄՀԿ-ի Գլխավոր տնօրենը սույն Պայմանագրի ավանդապահն է: